«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ

2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 31 մարդ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 20 մարդ (որից 18-ը կին):
Գիտությունների թեկնածու- 0
4 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:
Վարչական անձնակազմը - 4
Ուսումնաօժանդակ կազմը - 4

2020-2021 ուստարվա ընթացքում կնքվել է 8 աշխատանքային պայմանագիր:

Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 6 հիմնական աշխատող, (պայմանագրի լուծմամբ), իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 3-ը:

2020-2021 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է տնօրենիհամաձայնություն հրաման:

- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - դասախոսական կազմ՝ 35 աշխատանքային օր,
  - տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ 25 աշխատանքային օր,
  - պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատու, ուսումնաօժանդակ և հաշվապահ 20 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել, լսվել է տնօրինական խորհրդի 30.08.2020թ-ի նիստում (արձանագրություն N -1), իսկ հաստատվել է ընդհանուր ժողովի 03.09.2020թ-ի նիստում (արձանագրություն N -3):
- Քոլեջում աշխատում են տարիքային 3 թոշակառուներ:
- Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

- Բոլոր հիմնական և ժամավճարային աշխատողների անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

  2020-2021 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 41 -ը:

- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:
- Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:

  Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում դասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 111 տեղեկանք (աշխատողներին՝ 5, ուսանողներին՝ 106), բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան